# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 126

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 26-ը դեկտեմբերի 2018 թվականի թիվ 14 նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 26-ը դեկտեմբերի 2018 թվականի թիվ 14 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի ավագանու 16 նոյեմբերի 2018 թվականի թիվ 107 որոշումը անվավեր ճանաչելու և հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու առաջարկություն անելու մասին,

3.Արենի համայնքի ավագանու 16 նոյեմբերի 2018թվականի թիվ 110-Ն որոշման 1-ին կետի մեջ փոփոխություն կատարելու մասին,

4. Արենի համայնքի Ագարակաձոր, Արփի և Ռինդ բնակավայրերում ցրտահարության հետևանքով դրամական օգնություն ստացած տնտեսությունների թվաքանակը և կառավարության կողմից փոխհատուցված գումարի չափը ի գիտություն ընդունելու մասին,

5. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 127

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 107 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԵՎ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 01/10.1/8989-18 գրությունը, Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Անվավեր ճանաչել Արենի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 13 նիստում ընդունված «Արենի համայնքի Ելփին և Չիվա բնակավայրերի տարածքից, բուսական ծածկույթից զուրկ, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հատվածներից հողային զանգվածի 1խմ-ի համար վճար սահմանելու մասին» թիվ 107 որոշումը

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և խճապատման համար մշտապես օգտագործվում է Ելփին և Չիվա բնակավայրերից հողային զանգվածի խառնուրդը, առաջարկել համայնքի ղեկավարին կազմել հողաշինական գործ (հողամասերի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության) և յուրաքանչյուր բնակավայրից 0.2հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության հարցը ներկայացնել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՅԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 128

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 110-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 01/10.1/8989-18 գրությունը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 13 նիստում կայացրած թիվ 110-Ն որոշման առաջին մասում 2600հազար ՀՀ դրամ թիվը և բառերը փոխարինել 3000հազար ՀՀ դրամ թվով և բառերով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 129

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ, ԱՐՓԻ և ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, առաջին մասի 42-րդ կետի պահանջով Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Ագարակաձոր, Արփի և Ռինդ բնակավայրերում ցրտահարության հետևանքով դրմական օգնություն ցուցաբերած տնտեսությունների թվաքանակը և կառավարության կողմից տրված փոխհատուցման գումարի չափը ընդունել ի գիտություն համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -7 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արենի համայնքի

Ավագանու 26.12.2018թ-ի թիվ 129 որոշման

2018 թվականին ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի տարերային աղետներից տուժած բնակավայրերի ցանկ

| ԲՆԱԿԱՎԱՅՐ | ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ԹԻՎԸ | ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՉԱՓԸ /Հա/ | ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՉԱՓԸ /դրամ / | ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՉԱՓԸ /դրամ / |
|---|---|---|---|---|
| ԱՐՓԻ | 215 | 13,8 | 9,203,487 | 460,174 |
| ԱԳԱՐԱԿԱՁՈՐ | 211 | 35,21 | 25,046,985 | 1,252,349 |
| ՌԻՆԴ | 268 | 38 | 20,281,665 | 1,013,492 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 130

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Ուժը կորցրած ճանաչել՝

1. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» 26.12.2017 թվականի թիվ 365-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ մասի, 2.3-րդ կետի 3-րդ ենթակետը.

«ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ», ծածկագիր՝ 2.3-3:

2. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» 26.12.2017 թվականի թիվ 365-Ա հրամանով հաստատված հավելվածի 3-րդ մասի, 3.1-րդ կետի 8-րդ ենթակետը.

«ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ», ծածկագիր՝ 3.1-8:

Կողմ -8　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**